



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԶՈՎՔ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ և 56.1-րդ, 244.9-րդ հոդվածների, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքի 8-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի մարտի 25-ի N 67-Ա որոշմամբ հաստատված աշխատանքային խմբի կազմած արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. Հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու, համայնքային սեփականության հողամասերի օտարման կարգը խախտելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Զովք գյուղի վարչական ղեկավար **Նորիկ Գևորգյանին** նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկի չափով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ **Գուրգեն Ավետիսյանի** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի մայիսի 20  
ք. Հրազդան  
N 110-Ա

  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
